# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 25.11.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան

<<16>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Աղամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Ա/Ձ Գևորգ Ղուկասյան Վահանի, ի դեմս տնօրեն Գ. Ղուկասյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.11.2022թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 25.11.2022թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**ԳՆՈՐԴ**

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Աղամյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Գևորգ Ղուկասյան Վահանի
ք. Վանաձոր, Տարոն 2ՔՇՀ 4/Շ/35/15
ՀՎՀՀ 67023987
h/h 163138139411
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Վանաձոր մ/ճ
gltell.work@gmail.com
077-02-20-37
Գ. Ղուկասյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.